ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԾԱԳՈՂ ՎԵՃԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱՅԿ

«ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ փոխտնօրեն, ՀՀ արդարադատության ակադեմիայի վարչական մասնագիտացմամբ դատավորների թեկնածուների հավակնորդ, փաստաբանների պալատի փաստաբան
DOI: 10.63925/18294847-2026.blj22-14

Ամփոփագիր

Նպատակ: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել Հայաստանի Հանրապետությունում հանրային իշխանական լիազորությունների պատվիրակման պայմաններում ծագող իրավահարաբերությունների բնույթը, վարչական և քաղաքացիական արդարադատության միջև առարկայական ընդդատության սահմանազատման հիմնախնդիրները, դրանց ազդեցությունն արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացման վրա, ինչպես նաև գնահատել «Single Door to Justice» հայեցակարգի կիրառելիությունը՝ որպես առկա խնդիրների համակարգային լուծման միջոց:

Մեթոդներ: Հետազոտության ընթացքում կիրառվել են իրավադոգմատիկ, համակարգային, համեմատական-իրավական և նախադեպային իրավունքի վերլուծության մեթոդները: Ուսումնասիրվել են ՀՀ Սահմանադրության, վարչական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերի, ոլորտային օրենսդրության կարգավորումները, ՀՀ Սահմանադրական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումները, ինչպես նաև եվրոպական մի շարք պետությունների փորձը՝ հանրային գործառույթներ իրականացնող ոչ պետական կառույցների նկատմամբ վարչական արդարադատության վերահսկողության շրջանակներում:

Արդյունքներ: Հետազոտությունը ցույց է տվել, որ հանրային իշխանական լիազորությունների իրականացումը պետք է գնահատվի ոչ թե սուբյեկտի կազմակերպաիրավական ձևի, այլ իրականացվող գործառույթի բնույթի հիման վրա:

Հիմնավորվել է, որ պետական ոչ առևտրային կազմակերպությունների, ինքնակառավարվող մարմինների և օրենքով ստեղծված այլ իրավաբանական անձանց կողմից պատվիրակված հանրային լիազորությունների իրականացումը կարող է առաջացնել հանրային իրավահարաբերություններ, որոնցից բխող վեճերը պետք է քննվեն վարչական արդարադատության շրջանակներում: Բացահայտվել է նաև, որ վարչական և քաղաքացիական դատարանների տարբեր մոտեցումները նույն իրավահարաբերությունների գնահատման հարցում հանգեցնում են գործերի վերահասցեագրման, դատավարական ձգձգումների և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացման ռիսկերի:

Եզրահանգումներ:

Հեղինակը եզրակացնում է, որ գործող կարգավորումները և դատական պրակտիկան ամբողջությամբ չեն ապահովում դատական պաշտպանության արդյունավետությունն ու մատչելիությունը: Առաջարկվում է ներդնել «Single Door to Justice» սկզբունքը, որի պայմաններում անձը դիմում է միասնական դատական մուտքի կետ, իսկ գործի մասնագիտացված բաշխումն իրականացվում է դատական համակարգի ներսում: Նման մոտեցումը կնվազեցնի ընդդատության վերաբերյալ վեճերը, կբացառի սխալ դատարան ընտրելու ռիսկը և կնպաստի արդարադատության մատչելիության, արագության և արդյունավետության բարձրացմանը:

Հիմնաբառեր:Հանրային իրավունք, մասնավոր իրավունք, վարչական արդարադատություն, առարկայական ընդդատություն, հանրային իշխանական լիազորությունների պատվիրակում, արդյունավետ դատական պաշտպանություն, դատական վերահասցեագրում, Single Door to Justice:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդյունավետ դատական պաշտպանության իրավունքն իրավական պետության հիմնարար արժեքներից և մարդու իրավունքների պաշտպանության կարևորագույն երաշխիքներից մեկն է:

Այդ իրավունքի լիարժեք իրացումը ենթադրում է ոչ միայն դատարան դիմելու ձևական հնարավորություն, այլև անձի համար իր խախտված կամ վիճարկվող իրավունքների պաշտպանության արդյունավետ և մատչելի մեխանիզմների առկայություն: Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում

դատական համակարգում գործերի առարկայական ընդդատության և ենթակայության հստակ սահմանազատումը, քանի որ անձի կողմից ընտրված դատավարական ճանապարհն անմիջականորեն պայմանավորում է նրա դատական պաշտպանության արդյունավետության աստիճանը:

Հայաստանի Հանրապետությունում գործող դատական համակարգը կառուցված է հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման սկզբունքի վրա, որի արդյունքում ձևավորվել են վարչական և քաղաքացիական արդարադատության համեմատաբար ինքնուրույն համակարգեր: Տվյալ մոտեցման հիմքում ընկած է այն գաղափարը, որ հանրային իշխանության իրականացման ոլորտում ծագող վեճերը և մասնավոր անձանց միջև հարաբերություններից բխող վեճերը պահանջում են իրավական պաշտպանության տարբեր մեխանիզմներ և դատավարական տարբեր գործիքակազմ:

Մասնավորապես, վարչական արդարադատությունն ուղղված է հանրային իշխանության նկատմամբ դատական վերահսկողության ապահովմանը և իշխանության ու անհատի միջև առկա անհավասարակշռության հաղթահարմանը, մինչդեռ քաղաքացիական արդարադատությունը հիմնականում հիմնված է իրավահավասար սուբյեկտների մրցակցային դատավարության սկզբունքի վրա:

Միևնույն ժամանակ, հանրային կառավարման ժամանակակից զարգացումները ցույց են տալիս, որ հանրային իշխանական գործառույթների իրականացումը վաղուց այլևս բացառապես պետական և տեղական ինքնակառավարման մարմինների մենաշնորհը չէ:

Պետությունները increasingly դիմում են հանրային գործառույթների պատվիրակման տարբեր ձևերի՝ ստեղծելով կամ լիազորելով այնպիսի կազմակերպություններ, որոնք, պահպանելով մասնավոր կամ ինքնակառավարվող կազմակերպության կարգավիճակ, իրականացնում են հանրային նշանակության գործառույթներ և օժտվում են իշխանական լիազորություններով: Նման պայմաններում առավել դժվար է դառնում տվյալ իրավահարաբերության հանրային կամ մասնավոր բնույթի որոշումը և, հետևաբար, համապատասխան դատարանի ընտրությունը:

Հատկապես խնդրահարույց են այն դեպքերը, երբ պետական ոչ առևտրային կազմակերպությունները, ինքնակառավարվող մասնագիտական

կազմակերպությունները կամ օրենքով ստեղծված այլ իրավաբանական անձինք իրականացնում են պետության կողմից պատվիրակված հանրային գործառույթներ:

Թեև սահմանադրական և վճռաբեկ դատական պրակտիկան աստիճանաբար ձևավորել է գործառութային մոտեցում՝ ըստ որի որոշիչ նշանակություն պետք է ունենա ոչ թե սուբյեկտի կազմակերպաիրավական ձևը, այլ նրա կողմից իրականացվող գործառույթի բնույթը, այդուհանդերձ, դատական պրակտիկայում դեռևս առկա են տարբեր մեկնաբանություններ, որոնք առաջացնում են գործերի վերահասցեագրման, ենթակայության շուրջ վեճերի և դատավարական ձգձգումների խնդիրներ:

Նման երևույթները կարող են բացասաբար անդրադառնալ ոչ միայն արդարադատության արդյունավետության, այլև դատական պաշտպանության մատչելիության վրա՝ ստեղծելով իրավիճակ, երբ անձի իրավունքների պաշտպանությունը կախված է դառնում ճիշտ մասնագիտացված դատարան ընտրելու կարողությունից: Հետևաբար, արդիական է դառնում գնահատել գործող կարգավորումների համապատասխանությունն արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական և միջազգային չափանիշներին, ինչպես նաև ուսումնասիրել այնպիսի այլընտրանքային մոտեցումների կիրառման հնարավորությունը, որոնք կնվազեցնեն դատավարական ձևականությունների ազդեցությունն իրավունքների պաշտպանության վրա:

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել հանրային իշխանական լիազորությունների պատվիրակման պայմաններում ծագող վեճերի իրավական բնույթը, վերլուծել դրանց առարկայական ընդդատության և ենթակայության որոշման վերաբերյալ ՀՀ օրենսդրական և նախադեպային կարգավորումները, բացահայտել առկա գործնական խնդիրները և համեմատական իրավական վերլուծության հիման վրա գնահատել «Single Door to Justice» հայեցակարգի կիրառելիությունը՝ որպես դատական պաշտպանության արդյունավետության բարձրացման հնարավոր միջոց:

Սույն ուսումնասիրության գիտական նորույթն այն է, որ հանրային իշխանական լիազորությունների պատվիրակման և դատական ենթակայության որոշման խնդիրները դիտարկվում են ոչ միայն հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման դասական տեսության, այլև արդյունավետ դատական պաշտպանության և «Single Door to Justice» սկզբունքի համատեքստում՝ առաջարկելով

Հայաստանի Հանրապետության դատական համակարգի համար համակարգային բարեփոխումների հնարավոր ուղղություններ:

1. **Հանրային իշխանական լիազորությունների պատվիրակումը.** Հայաստանի Հանրապետությունում հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման շնորհիվ առանձնացվում է հանրային և մասնավոր իրավունքը, իսկ այդ իրավունքների պաշտպանությունն իրականացվում է համապատասխանաբար վարչական և քաղաքացիական դատավարությունների կարգով (որոշակի բացառությունների հաշվառմամբ):

Իրավունքների դատավարական տարանջատման մասին ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշմամբ[1] արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ տարրն է անձի՝ այն դատարանում իր գործի քննության իրավունքը, որի ընդդատությանն օրենքով հանձնված է տվյալ գործը:

Այսինքն՝ դատական գործերի տարանջատումը քաղաքացիականի և վարչականի պայմանավորված է այդ գործերով վիճելի իրավահարաբերության բնույթով. կոնկրետ գործի՝ առարկայական ընդդատության հարցը բացահայտելու համար անհրաժեշտ է պարզել այդ գործով վիճելի իրավահարաբերության բնույթը, այսինքն՝ այն հարցը, թե արդյոք տվյալ գործը ծագում է հանրային, թե մասնավոր իրավահարաբերություններից բխող վեճից:

Կարևոր է անդրադառնալ այն հանգամանքին, որ, ի տարբերություն քաղաքացիական արդարադատությունում հավասար մրցակցային ընթացակարգերի, վարչական արդարադատության պայմաններում հավասար մրցակցության ապահովման համար ակտիվ դերակատարություն ունի դատարանը, քանի որ հանրային իրավահարաբերություններում դատավարական մի կողմը մշտապես օժտված է հանրային իշխանական լիազորությամբ, և ինչը հարթելու, դատավարական իրավունքները և պատկանությունները հավասարեցնելու, հանրային իշխանական լիազորությունը հաղթահարելու համար վարչական դատարանները լիազորված են գործին ի պաշտոնե:

[1] ՀՀ սահմանադրական դատարանի 03.02.2009 թվականի թիվ ՍԴՈ-787 որոշում:

Ի պաշտոնե գործելու ՀՀ վարչական դատարանի պարտականությունը սահմանվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածով:

ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշմամբ[2] արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝ վարչական արդարադատության ինստիտուտի ներդրումը, ի թիվս այլնի, նպատակ է հետապնդում առաջին հերթին ապահովելու տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ:

Վարչական դատավարությունում կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքի մասնավոր դրսևորումներից մեկն այն է, որ վարչական դատարանը պարտավոր է նախ և առաջ ապահովել գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե ("ex officio") պարզելու սկզբունքը, որը հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության ընթացքում վարչական դատարանին օժտում է ակտիվ դերակատարությամբ, ինչը հնարավորություն է տալիս արդյունավետորեն ապահովելու իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ընդունած իրավական ակտերի, գործողությունների ու անգործությունների դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության իրացումը[3]:

Այսպես՝

Վարչական դատավարության առարկայական ընդդատության մասին կարգավորումը սահմանված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ 10-րդ հոդվածով, որի բավանդակության համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը:

Այդ պահանջից բացառություն են կազմում ՀՀ սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված գործերը, ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, ինչպես նաև պատժի կատարմանն առնչվող գործերը:

---

[2] ՀՀ սահմանադրական դատարանի 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190 որոշում:

[3] Տե՛ս նաև ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թվականի թիվ ՎԴ/10561/05/13 և 2025 թվականի թիվ ՎԴ/0324/05/23 որոշումները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, **եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի** վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները ներառյալ:

Նորմի բովանդակությունից ակնհայտ է դառնում, որ, բացի իրավահարաբերության հանրային բնույթից, անձի վարչական դատավարության կարգով իրավունքների դատական պաշտպանությունը կապվում է վերջինիս հանրային իրավահարաբերության բնագավառում այն իրավունքների խախտման հետ, որոնք դրսևորվել են **պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրանց պաշտոնատար անձի** վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ:

ՀՀ-ում՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի կարգավորումների պայմաններում, հանրային իշխանության բնագավառում գործելու որոշակի լիազորություններ պատվիրակվել են մի դեպքում պետական ոչ առևտրային կազմակերպություններին, մեկ այլ դեպքում՝ իրավաբանական անձանց:

Օրինակ՝

1) «Հավատարմագրման մասին» օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության հավատարմագրման ազգային մարմինն ստեղծվում է որպես պետական ոչ առևտրային կազմակերպություն, որին վերապահվում է հավատարմագրման ոլորտում միանձնյա իրականացնել կազմակերպությունների հավատարմագրում, այդ թվում՝ իր որոշմամբ կասեցնել, ընդհուպ՝ դադարեցնել որևէ կազմակերպության հավատարմագրումը, իրականացնել հերթական և արտահերթ ստուգումներ հավատարմագրված կազմակերպություններում և այլն:

2) «Փաստաբանության մասին» օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատն օրենքի հիման վրա ստեղծված փաստաբանների մասնագիտական, անկախ, ինքնակառավարվող ոչ առևտրային

կազմակերպություն է, որի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով, և պետական գրանցման պահից ունի իրավաբանական անձի կարգավիճակ, ավելին՝ նույն օրենքի հիման վրա պալատն է իրականացնում ՀՀ-ում փաստաբանների արտոնագրման գործընթացը (այդ թվում՝ արտոնագրի դադարեցման) և այլն:

3) իրավիճակը նմանատիպ է նաև ինքնակառավարվող կազմակերպություն հանդիսացող նոտարական պալատի, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության, կադաստրային գրանցման գործառույթ իրականացնող կազմակերպությունների և որոշ այլ ինքնակառավարվող կազմակերպությունների մասով:

ՀՀ սահմանադրական դատարանը և ՀՀ վճռաբեկ դատարանն իրենց որոշումներով բազմիցս հայտնել են այն իրավական դիրքորոշումը, որ հանրային իշխանական լիազորությունը ոչ պետական մարմնին պատվիրակելու դեպքում այդ կազմակերպությունը համարվում է հանրային իշխանական լիազորություններ իրականացնող, և որ վերջիններիս կայացրած որոշումները, գործողություններն ու անգործությունները ենթակա են քննության ՀՀ վարչական դատավարության կարգով:

Օրինակ՝

1) ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշմամբ[4] բացահայտել է «վարչարարություն» և «վարչական մարմին» հասկացությունների բովանդակությունը՝ ընդգծելով, որ որոշիչը ոչ թե կազմակերպական-իրավական ձևն է, այլ հանրային իշխանական գործառույթի իրականացումը:

2) ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշմամբ[5] արձանագրել է, պետական իշխանության պատվիրակված լիազորության իրականացումը կարող է անձին կամ կազմակերպությանը դարձնել վարչաիրավական հարաբերությունների սուբյեկտ:

3) ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներով[6] քննարկել է ինքնակառավարվող մարմին հանդիսացող ՀՀ փաստաբանների պալատի որոշումների դեմ վեճերը և հանգել է այն եզրակացությանը, որ ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական և

[4] ՀՀ սահմանադրական դատարանի 2006 թվականի թիվ ՍԴՈ-630 որոշում:
[5] ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի թիվ ՍԴՈ-1026 որոշում:
[6] ՀՀ վճռաբեկ դատարանի 2022 թվականի թիվ ԵԴ/38635/02/19 և ԵԴ/3478/02/20 գործերով որոշումներ:

արտոնագրման լիազորությունները մասնավոր բնույթ չունեն և կրում են հանրային-իրավական տարրեր:

Ավելին, ՀՀ Վճռաբեկ դատարանն իր որոշմամբ[7] նշում է, որ **հանրային իրավահարաբերություններում որպես հանրային իշխանության կրող կարող են հանդես գալ ոչ միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, այլև պետության կողմից օրենքով պատվիրակված հանրային գործառույթ իրականացնող մասնավոր անձինք**:

Հանրային իշխանական լիազորությունների պատվիրակումը ժամանակակից հանրային կառավարման անբաժանելի տարրերից է: Պետությունը, ձգտելով ապահովել կառավարման արդյունավետություն, մասնագիտական անկախություն և վարչարարական ճկունություն, որոշ ոլորտներում հրաժարվում է գործառույթների անմիջական իրականացումից և դրանք վերապահում է առանձին կազմակերպությունների կամ ինքնակառավարվող մարմինների:

Սակայն նման պատվիրակումը չի հանգեցնում համապատասխան գործառույթի իրավաբանական բնույթի փոփոխության: Եթե տվյալ կազմակերպությունն իրականացնում է պետության անունից կամ պետության լիազորմամբ հանրային նշանակության գործառույթ, ընդունում է պարտադիր իրավական հետևանքներ առաջացնող որոշումներ կամ սահմանափակում է անձանց իրավունքները, ապա վերջինիս գործունեությունը շարունակում է կրել հանրային բնույթ՝ անկախ կազմակերպական-իրավական ձևից:

Հակառակ մոտեցումը կարող է ստեղծել մի իրավիճակ, երբ նույն բովանդակությամբ իշխանական գործունեությունը տարբեր դատավարական ռեժիմների ենթարկվի միայն այն պատճառաբանությամբ, որ այն իրականացվել է ոչ թե պետական մարմնի, այլ օրենքով ստեղծված կամ լիազորված այլ սուբյեկտի կողմից: Նման մոտեցումը կհակասեր ոչ միայն իրավական որոշակիության սկզբունքին, այլև վարչական արդարադատության հիմնական նպատակին՝ ապահովել հանրային իշխանության նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողություն:

Հետևաբար, պատվիրակված լիազորությունների պայմաններում **որոշիչ պետք է համարվի ոչ թե սուբյեկտային, այլ գործառութային չափանիշը**: Այլ կերպ ասած՝ եթե

[7] ՀՀ վճռաբեկ դատարանի 2022 թվականի թիվ ԵԴ/38635/02/19 որոշում:

կազմակերպությունը տվյալ իրավահարաբերությունում գործել է որպես հանրային իշխանության կրող, ապա այդ գործունեությունից բխող վեճերը նույնպես պետք է դիտարկվեն որպես հանրային իրավահարաբերություններից ծագող վեճեր:

Ողջ վերոգրյալի հաշվառմամբ կարելի է պնդել, որ անձի իրավունքների դատական պաշտպանությունը վարչական կամ քաղաքացիական դատավարության կարգով իրականացման համար պետք է առաջնահերթությամբ գնահատել, թե արդյոք որոշում կայացրած, գործողություն կատարած կամ անգործություն դրսևորած մարմինն իր գործունեությամբ գործել է որպես **հանրային իշխանության կրող, թե՝ ոչ**:

2. Ընդդատության հիմնախնդիրները. Հարկ է անդրադառնալ նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վերահասցեագրման ինստիտուտին, քանի որ օրենսգրքով ՀՀ վարչական դատարանին հնարավորություն է տրված հայցը վարույթ ընդունելու կամ գործի քննության ցանկացած փուլում գործը վերահասցեագրել ըստ ընդդատության, եթե պարզում է, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն:

Ի տարբերություն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը վերահասցեագրման հնարավորություն չի նախատեսում, այսինքն՝ հայցի վարույթի ընդունելության փոլում և գործի քննության այլ փուլերում առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական մասնագիտացված դատարանը (այսուհետ՝ քաղաքացիական դատարան) օժտված չէ գործն ըստ առարկայական ենթակայությամբ վերահասցեագրելու իրավասությամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության միակ կարգավորումը, որով օրենսդիրը փորձել է հավասարեցնել ՀՀ վարչական և քաղաքացիական դատարանների՝ առարկայական ընդդատության-ենթակայության լիազորությունները, արտահայտվել է 26-րդ հոդվածով, այն էլ միայն այն մասով, երբ քաղաքացիական դատարանում ստացվում է ՀՀ վարչական դատարանից ըստ ընդդատության վերահասցեագրված գործ:

Այնուամենայնիվ, օրենսդիրն այս մասով քաղաքացիական դատարանին օժտել է միայն գործի առարկայական ընդդատության-ենթակայության հարցի անհամաձայնության դեպքում ՀՀ վճռաբեկ դատարանին դիմելու իրավասությամբ,

այսինքն՝ քաղաքացիական դատարանի դատավորի գնահատմամբ վերահասցեագրված վեճն ամեն դեպքում հանրային վեճ լինելու պատճառաբանության պայմաններում ՀՀ վարչական դատարանին վերահասցեագրելու ուղիղ լիազորությամբ չօժտելը, ենթադրաբար հիմնավորվել է գործերի շրջապտույտից և արդյունավետ դատական պաշտպանության ապահովման սահմանադրական երաշխիքի համատեքստով:

Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ ՀՀ վարչական դատարանից գործի վերահասցեագրման պայմաններում քաղաքացիական դատարանը համարում է, որ վեճը ենթակա է լուծման վարչական դատավարության կարգով, պետք քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով մերժի հայցի ընդունումը, ինչը կարող է անձի դատական պաշտպանության մատչելիության սպառնալիք հանդիսանալ, քանի որ, ի տարբերություն քաղաքացիական դատավարության օրենսդրության, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը հայցի ընդունման մերժման հիմք է համարում բացառապես այն իրավիճակը, երբ վեճը ենթակա չէ քննության **ՀՀ որևէ այլ դատարանում**, իսկ վեճի ՀՀ որևէ դատարանի քննության ենթակայության դեպքում այն, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 77-րդ և 81-րդ հոդվածների պահանջներին համապատասխան, ենթակա է վերահասցեագրման՝ ըստ առարկայական ընդդատության:

Ի տարբերություն ՀՀ վարչական դատավարության կարգավորումների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով:

Այս պայմաններում ստացվում է, որ եթե անձը հանրային և մասնավոր իրավահարաբերությունները սխալ ընկալելու պայմաններում սկզբնապես դիմել է ՀՀ վարչական դատարան, իր իրավունքների պաշտպանության մասով չի տուժի, քանի որ դրանց մասնավոր բնույթի դեպքում իր գործը կվերահասցեագրվի քաղաքացիական դատարանին: Իրավիճակն առավել վատ է, երբ անձը սխալ կողմնորոշվելու դեպքում սկզբնապես դիմի քաղաքացիական դատարանին, սակայն պարզվի, որ վեճն ունի հանրային բնույթ, և պետք էր դիմել ՀՀ վարչական դատարան, քանի որ ընդհանուր

հայցային վաղեմության պայմաններում վարչական դատարանում, բացի ճանաչման հայցի տեսակից, մյուս հայցատեսակների ներկայացման ժամկետներն առավել կարճ են, քան քաղաքացիական դատարանում, և կարող է լինել այնպես, որ քաղաքացիական դատարան դիմելու դրությամբ արդեն անցած լինեն համապատասխան հայցատեսակով ՀՀ վարչական դատարան դիմելու համար ՀՀ վարչական դտավարության օրենսգրքով սահմանված ժամկետները:

Խնդիրն այն է, որ շատ դեպքերում անձի կողմից իր վեճի հանրային կամ մասնավոր բնույթ ունենալու տարանջատման հնարավորությունը ոչ թե վերջինիս կողմից այդ հարաբերությունների սուբյեկտիվ սխալ ընկալման գործոնն է, այլ քաղաքացիական և վարչական դատարանների՝ հարցի վերաբերյալ միմյանցից սկզբունքորեն տարբերվող նախադեպային պրակտիկան:

Այսպես, ՀՀ Վճռաբեկ դատարանն իր որոշումներով[8] մասնավոր և հանրային իրավահարաբերությունների տարանջատման համար սահմանել է հստակ չափանիշներ՝ դրանց շարքում նախատեսելով նաև իրավահարաբերության սուբյեկտներից մեկի **պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին և(կամ) դրանց պաշտոնատար անձ** լինելու պարտադիր բաղադրիչը, այս մեկնաբանությանը հակառակ, ՀՀ Վճռաբեկ դատարանն իր որոշմամբ[9]հաստատել է, որ **հանրային իրավահարաբերություններում որպես հանրային իշխանության կրող կարող են հանդես գալ ոչ միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, այլև պետության կողմից օրենքով պատվիրակված հանրային գործառույթ իրականացնող մասնավոր անձինք**:

Հետևաբար, ստացվում է, որ, օրինակ, օրենքի հիման վրա ստեղծված, հանրային իշխանության պատվիրակված գործառույթ իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից կայացված որոշումների, գործողությունների և անգործությունների դեմ վեճերը պետք է համարվեն հանրային իրավական, այնինչ դատական պրակտիկայում դրանք ՀՀ վարչական դատարանի կողմից հաճախ վերահասցեագրվում են, իսկ քաղաքացիական դատարանը դրանց՝ քաղաքացիական դատարանին ենթակա լինելու անհամաձայնության դեպքում դիմում է ՀՀ վճռաբեկ

[8] ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թվականի թիվ ՎԴ/1621/05/14 և ՎԴ/0477/05/15 որոշումներ:
[9] ՀՀ վճռաբեկ դատարանի 2022 թվականի թիվ ԵԴ/38635/02/19 որոշում:

դատարանին, որից հետո որևէ որոշման պայմաններում ըստ էության տուժում է անձի դատական պաշտպանության արդյունավետությունը, քանի որ խախտվում է «Justice delayed is justice denied» («Ուշացած արդարադատությունը մերժված արդարադատություն է») սկզբունքը[10]:

Առավել վտանգավոր է, երբ ընդդատության-ենթակայության այդ շրջապտույտի արդյունքում վտանգվում է դատական պաշտպանության մատչելիության իրավունքը, քանի որ տեսականորեն հնարավոր է իրավիճակ, երբ շրջապտույտի ընթացքում կայացվեն միջանկյալ դատական ակտեր, որոնք գործի քննությունը բերեն փակուղու կամ այն չափ երկարացնեն, որ արդարադատություն հայցողի վեճն ըստ էության կամ սպառվի կամ այլևս լինի ժամանակավրեպ:

Այլ կերպ ասված՝ դատավարական կանոնները չեն կարող այնպես կառուցվել, որ իրավունքի պաշտպանությունը գործնականում դառնա անհամաչափորեն դժվար կամ անհնար, հետևաբար, եթե իր իրավունքների պաշտպանություն հայցողն ստիպված է նախ ճիշտ որոշել՝ վարչական, թե քաղաքացիական դատարան դիմել, և սխալի դեպքում ստանում է հայցի վերադարձ, ապա դատական պաշտպանության արդյունավետության ռիսկը փաստացի տեղափոխվում է դատարանից դեպի անձը:

2.1. Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի կիրառման սահմանադրաիրավական հիմնախնդիրները

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՔԴՕ) 26-րդ հոդվածով նախատեսված կարգավորումն առանձնահատուկ նշանակություն ունի վարչական և քաղաքացիական արդարադատության սահմանագծում առաջացող ենթակայության վեճերի լուծման համատեքստում: Օրենսդիրը նախատեսել է, որ եթե վարչական դատարանի կողմից վերահասցեագրված գործի հարցում քաղաքացիական դատարանը համաձայն չէ գործի ենթակայությանը, ապա հարցը փոխանցվում է ՀՀ վճռաբեկ դատարանին, որի նախագահը և բոլոր պալատների նախագահները որոշում են իրավասու դատարանը:

Թեև նշված կարգավորումը նպատակ ունի կանխելու դատարանների միջև ենթակայության շուրջ անվերջ վեճերը և ապահովելու գործի հետագա ընթացքը, դրա

[10] Տե՛ս՝ Kudła v. Poland, թիվ 30210/96, Մեծ պալատ, 26.10.2000:

իրավական բնույթի ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել մի շարք սահմանադրաիրավական հարցեր:

Նախ՝ ՔԴՕ 26-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգը փաստացի իրականացվում է դատական քննության շրջանակներից դուրս: Կողմերը չեն մասնակցում նիստին, նրանց չեն տրվում մրցակցային դատավարության լիարժեք հնարավորություններ, իսկ դիրքորոշումը կարող է ներկայացվել միայն սահմանափակ գրավոր ձևով: Ընդ որում՝ ընդունվող որոշումը պարտադիր է, վերջնական է, և դրա օրինականությունը հետագայում չի կարող վիճարկվել այն հիմքով, որ գործը ենթակա չէր քննության քաղաքացիական դատավարության կարգով:

Այս հանգամանքն առանձնահատուկ նշանակություն է ստանում այն պատճառով, որ ենթակայության կամ ընդդատության հարցն ինքնին չի կարող դիտվել որպես զուտ դատական կառավարման կամ գործավարության խնդիր: Դատավարական օրենսգրքերի համակարգային վերլուծությունից և ՀՀ Սահմանադրության 162-րդ հոդվածի 1-ին մասից բխում է, որ արդարադատությունն իրականացվում է բացառապես դատարանների կողմից և ներառում է նաև տվյալ պահանջի դատական քննության իրավասության որոշումը: Այլ կերպ ասած՝ այն հարցը, թե որ դատարանն է իրավասու քննել անձի պահանջը, անմիջականորեն կապված է սահմանադրորեն երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման հետ:

Այս տեսանկյունից խնդրահարույց է այն հանգամանքը, որ ՔԴՕ 26-րդ հոդվածի կիրառման դեպքում ենթակայության վերջնական որոշումը կայացվում է ոչ թե դատարանի կողմից իրականացվող դասական դատավարական ընթացակարգի շրջանակներում, այլ հատուկ վարչարարական բնույթի մեխանիզմով, որտեղ բացակայում են դատաքննությանը բնորոշ մի շարք հիմնարար երաշխիքներ՝ հրապարակայնությունը, անմիջականությունը, մրցակցայնությունը և որոշման բողոքարկման հնարավորությունը:

Արդյունքում՝ ստեղծվում է իրավիճակ, երբ անձի համար դատարանի մատչելիության հարցը որոշվում է այնպիսի ընթացակարգով, որը միայն մասնակիորեն է ապահովում դատական պաշտպանության իրավունքի իրացման համար անհրաժեշտ երաշխիքները: Այս հարցն առավել մեծ նշանակություն է ձեռք բերում այն դեպքերում, երբ գործի ենթակայության մասին ընդունված որոշման հետևանքով հայցն ըստ էության

չի քննվում որևէ դատարանի կողմից կամ առաջանում է դատական պաշտպանության անհամաչափ ձգձգման վտանգ:

Այս համատեքստում կարելի է պնդել, որ ենթակայության վերաբերյալ վեճերի լուծման գոյություն ունեցող մոդելը լրացուցիչ հիմնավորում է տալիս «Single Door to Justice» հայեցակարգի օգտին: Եթե գործի մասնագիտական բաշխումը դիտարկվի որպես դատական համակարգի ներքին կազմակերպման խնդիր, ապա անձի դատական պաշտպանության իրավունքը կախված չի լինի մասնագիտացված դատարանի ճիշտ ընտրությունից, իսկ ենթակայության վերաբերյալ տարաձայնությունները չեն հանգեցնի արդարադատության մատչելիության սահմանափակման:

Այս համատեքստում, կարծում եմ, քննարկման ենթակա հարցադրումներն են՝

1) ի՞նչ արժեք ունի համայնքային կամ պետական ոչ առևտրային կազմակերպությունների անհրաժեշտությունը ՀՀ-ում.

2) արդյո՞ք այդ կազմակերպություններին կարող է օրենսդրությամբ պատվիրակվել այնպեսի գործառույթ, ինչը հանրային իշխանական լիազորություն է:

Սույն հոդվածում արծարծված խնդիրը չի սահմանափակվում միայն քաղաքացիական կամ միայն վարչական դատավարության առանձին թերություններով: Խնդիրը գտնվում է երկու դատավարական համակարգերի հատման կետում և պայմանավորված է այն հանգամանքով, որ պատվիրակված հանրային իշխանական լիազորություններ իրականացնող կազմակերպությունների գործունեությունից ծագող որոշ վեճերի իրավական բնույթի վերաբերյալ դատական պրակտիկայում առկա են տարբեր մոտեցումներ: Արդյունքում՝ վիճահարույց է դառնում ոչ միայն գործի քննության կարգը, այլև այն հարցը, թե որ մասնագիտացված դատարանն է իրավասու իրականացնել դատական պաշտպանությունը: Հետևաբար, խոսքն առարկայական ընդդատության համակարգային խնդրի մասին է, որն անդրադառնում է ինչպես վարչական, այնպես էլ քաղաքացիական արդարադատության արդյունավետության վրա:

3. Համեմատական իրավական վերլուծություն. Հարցադրման պատասխանը պետք է քննարկել ընդհանրական մետեցմամբ՝ անդրադարձ կատարելով Եվրոպական երկրների համանման իրավահարաբերություններին:

Այսպես, Գերմանիայում, Ֆրանսիայում և Եվրոպական մի շարք այլ երկրներում օրենսդրությամբ չկան պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ, այդ թվում՝ դրանց կազմակերպաիրավական ձևի համատեքստում, սակայն առկա են մարմիններ, որոնք գործում են պետական կամ համայնքային մարմիններից անկախ, և վերջիններս իրականացնում են հանրային իշխանական լիազորություններ:

Մասնավորապես գործում են հանրային իրավունքի հիմնարկ կամ հանրային իրավունքի իրավաբանական անձ կոչված իրավաբանական անձի կարգավիճակով կառույցներ, որոնք իրականացնում են հանրային իշխանական գործառույթներ, ընդհուպ՝ կայացնում վարչական ակտեր, իրականացնում այս կամ այն գործունեության լիցենզավորում, գանձում մեն պարտադիր վճարներ և այլն:

Գերմանիայում այդ կազմակերպությունները գործում են երբեմն պետական մարմիններից անկախ վիճակում՝ որպես գործակալություններ, կորպորացիաներ, անկախ վարչական մարմիններ և այլն, իսկ որպես այդպիսին՝ Գերմանիայում գործում է հանրային հեռուստառադիոընկերությունը, պետական համալսարանը, փաստաբանների պալատը և այլն:

Գերմանիայում այդ մարմինների որոշումների, գործողությունների և անգործությունների դեմ վեճերը ենթակա են քննության մասնագիտացված վարչական դատարանում:

Հատկանշական է, որ եվրոպական բազմաթիվ երկրներում հանրային իշխանական լիազորություններ իրականացնող ոչ պետական կառույցների նկատմամբ դատական վերահսկողությունը կառուցված է ոչ թե կազմակերպական ձևի, այլ իրականացվող գործառույթի հիման վրա: Գերմանական վարչաիրավական դոկտրինայում վաղուց ձևավորվել է sogenannte Funktionsvorbehalt մոտեցումը, որի համաձայն անձի նկատմամբ իշխանական ներգործություն իրականացնող սուբյեկտը ենթակա է վարչական իրավունքի պահանջներին՝ անկախ իր կազմակերպական կառուցվածքից:

Նման մոտեցում է նկատվում նաև Ֆրանսիայում, որտեղ Conseil d'État-ի ձևավորած նախադեպային պրակտիկան ճանաչում է, որ private bodies exercising public functions կարգավիճակ ունեցող սուբյեկտների որոշումները կարող են վիճարկվել վարչական արդարադատության շրջանակներում: Արդյունքում՝ դատարանի իրավասությունը պայմանավորվում է ոչ թե սուբյեկտի անվանմամբ, այլ այն հարցով, թե նրա գործունեությունն արդյոք ուղղված է հանրային իշխանության իրականացմանը:

Նման փորձը վկայում է, որ հանրային իշխանության պատվիրակման զարգացումը եվրոպական համակարգերում սովորաբար ուղեկցվում է վարչական արդարադատության իրավասության ընդլայնմամբ, այլ ոչ թե նեղացմամբ:

Ըստ էության՝ ստացվում է, որ պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների գոյությունը ՀՀ-ում միտված է բեռնաթափելու պետական և համայնքային մարմինների ծանրաբեռնվածությունը, և վերջիններիս կարող է պատվիրակվել պետական գործառույթ, սակայն այն պայմանով, որ վերջիններիս՝ այդ գործառույթների իրականացման շրջանակներում ծագող վեճերը պետք է քննվեն վարչական դատարանների կողմից ՀՀ վարչական դատավարության պահանջներին համապատասխան:

Եզրակացություններ: Ողջ վերոգրյալի լույսի ներքո կարծում եմ, որ հայցի վերահասցեգրման և դրան հաջորդող ենթակայության-ընդդատության հարցի որոշման ՀՀ մեխանիզմներն այնքան էլ արդյունավետ չեն և շատ հաճախ պատճառ են դառնում արդյունավետ դատական պաշտպանության խաթարման, իսկ երբեմն էլ՝ դատական պաշտպանության մատչելիության վտանգման կամ սահմանափակման:

Խնդրի լուծումը կարելի է տեսնել կա՛մ դատական պրակտիկան՝ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ[11] հայտնած դիրքորոշմանը համապատասխանեցնելու, կա՛մ խնդրին համակարգային լուծում տալու եղանակով:

Այդ պատճառով առաջարկում եմ հարցի լուծման ուղին քննարկել «Single Door to Justice» սկզբունքի լույսի ներքո:

Այսպես՝

[11] ՀՀ վճռաբեկ դատարանի 2022 թվականի թիվ ԵԴ/38635/02/19 որոշում:

Կարծում եմ, որ վեճի ենթակայության-ընդդատության կամ դատական մասնագիտացման հարցերով գործի նախնական ֆիլտրացիան ինքնին **արդարադատության բուն բովանդակությունը չէ**, այլ արդարադատության կազմակերպական և վարչարարական նախապայմաններից մեկն է, որը կարող է իրականացվել նաև դատական համակարգի ներսում՝ առանց անձի վրա սխալ դատարան ընտրելու ռիսկը դնելու:

Արդարադատության հիմնական նպատակը վեճի լուծումն է և խախտված իրավունքի վերականգնումը:

Հետևաբար, հայցվորի տեսանկյունից երկրորդական է, թե այդ գործը դատական համակարգի ներսում որ մասնագիտացված դատարանն է քննելու:

Եվրոպայում նման դատական համակարգի մոդելներ են գործում Նորվեգիայում, Մեծ Բրիտանիայում, Նիդերլանդներում, Ավստրալիայում և այլն:

Դատական պաշտպանության արդյունավետության սկզբունքը պահանջում է, որ մասնագիտացման բեռը հնարավորինս դրվի դատական համակարգի վրա, ոչ թե դատավարության մասնակցի:

Այսինքն՝ վեճերի մասնագիտացված քննությունը և արդարադատության իրականացումը նույնական հասկացություններ չեն:

Արդարադատության նպատակը վեճի լուծումն է, մինչդեռ տվյալ վեճը մասնագիտացված կոնկրետ դատարանի կողմից քննվելու հարցն առավելապես դատական համակարգի ներքին կազմակերպման խնդիր է:

Այդ պատճառով անձի կողմից ոչ ճիշտ մասնագիտացված դատարան դիմելու ռիսկը չպետք է հանգեցնի հայցադիմումի վերադարձի, վերահասցեագրման կամ վարույթ ընդունելու մերժման:

Առավել արդյունավետ է այն մոդելը, որի պայմաններում դատական համակարգն ունի միասնական մուտքի կետ, իսկ գործի մասնագիտացված բաշխումն իրականացվում է համակարգի ներսում՝ ապահովելով դատական պաշտպանության մատչելիությունը, արագությունը և արդյունավետությունը:

Դատական պաշտպանության արդյունավետության տեսանկյունից արդյունավետ տարբերակ է այն, որ անձինք դիմեն դատարան, իսկ այդ վեճի՝ ըստ մասնագիտական ենթակայության հարցը բաշխվի դատական համակարգի ներքին գործավարության

ընթացակարգերով՝ հիքում ունենալով ՀՀ վարչական և քաղաքացիական դատավարության ենթակայության-ընդդատության մասին պահանջները:

Նույնը վերաբերում է նաև հայցերի ընդունելության և վերադարձման իրավահարաբերություններին:

Այս մոդելն էականորեն կնվազեցնի դատավորների ներկայիս գերծանրաբեռնվածությունը՝ ըստ էության, դատավորներին հնարավորություն տալով լծվելու բուն արդարադատության իրականացմանը (վեճերի լուծմանը):

«Single Door to Justice» հայեցակարգի ներդրումը պահանջում է ոչ միայն գաղափարական, այլև ինստիտուցիոնալ և օրենսդրական փոփոխություններ:

Նախ՝ անհրաժեշտ է դատական համակարգում ստեղծել միասնական մուտքի կետ, որտեղ հայցադիմումի ներկայացումը կատարվում է առանց կոնկրետ մասնագիտացված դատարան ընտրելու անհրաժեշտության:

Երկրորդ՝ անհրաժեշտ է վերանայել քաղաքացիական և վարչական դատավարության օրենսգրքերի այն դրույթները, որոնք առարկայական ընդդատության սխալ որոշման դեպքում հանգեցնում են հայցադիմումի վերադարձի կամ ընդունման մերժման:

Երրորդ՝ դատարանների աշխատակազմերում կարող են ձևավորվել մասնագիտացված ստորաբաժանումներ, որոնց գործառույթը կլինի ներկայացված դիմումների նախնական դասակարգումը և համապատասխան մասնագիտացված դատավորներին կամ դատարաններին բաշխումը:

Չորրորդ՝ անհրաժեշտ է սահմանել դատավարական երաշխիքներ, որոնց համաձայն հայցադիմումի սկզբնական ներկայացման ամսաթիվը պահպանվում է՝ անկախ այն հանգամանքից, թե հետագայում դատական համակարգի ներսում գործը որ մասնագիտացված դատարանին կբաշխվի:

Նման մոդելը հնարավորություն կտա միաժամանակ պահպանել դատական մասնագիտացումը և բացառել սխալ դատարան ընտրելու ռիսկի բացասական հետևանքները:

ПРОБЛЕМЫ ПРЕДМЕТНОЙ ПОДСУДНОСТИ СПОРОВ, ВОЗНИКАЮЩИХ ПРИ ОСУЩЕСТВЛЕНИИ ДЕЛЕГИРОВАННЫХ ПУБЛИЧНО-ВЛАСТНЫХ ПОЛНОМОЧИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

ВАРДАНЯН АЙК

Заместитель директора ООО «Международный центр исследований», кандидат в претенденты на включение в список кандидатов в судьи административной специализации Академии юстиции Республики Армения, адвокат Палаты адвокатов Республики Армения

Аннотация. Целью исследования является изучение правовой природы правоотношений, возникающих в условиях делегирования публично-властных полномочий в Республике Армения, выявление проблем разграничения предметной подсудности между административным и гражданским судопроизводством, определение их влияния на реализацию права на эффективную судебную защиту, а также оценка применимости концепции «Single Door to Justice» в качестве средства системного решения существующих проблем.

Методы. В ходе исследования были применены методы юридико-догматического, системного и сравнительно-правового анализа, а также анализа прецедентного права. Изучены положения Конституции Республики Армения, Кодекса административного судопроизводства Республики Армения, Гражданского процессуального кодекса Республики Армения и отраслевого законодательства, решения Конституционного Суда и Кассационного Суда Республики Армения, а также опыт ряда европейских государств в сфере судебного контроля в рамках административной юстиции за деятельностью негосударственных организаций, осуществляющих публичные функции.

Результаты. Исследование показало, что осуществление публично-властных полномочий должно оцениваться исходя не из организационно-правовой формы субъекта, а из характера выполняемой им функции. Обосновано, что осуществление делегированных публичных полномочий государственными некоммерческими организациями, органами самоуправления и иными юридическими лицами, созданными на основании закона, может порождать публично-правовые отношения, споры из которых подлежат рассмотрению в порядке административного судопроизводства. Выявлено также, что различия в подходах административных и гражданских судов к квалификации одних и тех же правоотношений приводят к передаче дел из одного суда в другой, затягиванию судебного разбирательства и создают риски нарушения права на эффективную судебную защиту.

Выводы. Автор приходит к выводу, что действующее правовое регулирование и судебная практика не в полной мере обеспечивают эффективность и доступность судебной защиты. Предлагается внедрить принцип «Single Door to Justice» («Единый вход в систему правосудия»), предусматривающий обращение лица в единую точку доступа к правосудию, при этом распределение дел с учётом их специализации осуществляется внутри судебной системы. Такой подход позволит сократить количество споров о подсудности, исключить риск ошибочного выбора суда и повысить доступность, оперативность и эффективность правосудия.

Ключевые слова: публичное право, частное право, административная юстиция, предметная подсудность, делегирование публично-властных полномочий, эффективная судебная защита, передача дел по подсудности, Single Door to Justice.

ISSUES OF SUBJECT-MATTER JURISDICTION IN DISPUTES ARISING FROM THE EXERCISE OF DELEGATED PUBLIC AUTHORITY POWERS IN THE REPUBLIC OF ARMENIA

VARDANYAN HAYK

Deputy Director of the "International Research Center" LLC, Candidate for Inclusion in the List of Candidates for Administrative Judges of the Academy of Justice of the Republic of Armenia, advocate (Attorney) of the chamber of advocates of the Republic of Armenia

ABSTRACT

Purpose. The purpose of this study is to examine the legal nature of legal relationships arising in the context of the delegation of public authority powers in the Republic of Armenia, the issues related to the delimitation of subject-matter jurisdiction between administrative and civil proceedings, their impact on the exercise of the right to effective judicial protection, and to assess the applicability of the "Single Door to Justice" concept as a tool for the systemic resolution of existing problems.

Methods. The study employs legal-dogmatic, systemic, comparative legal, and case-law analysis methods. The research examines the provisions of the Constitution of the Republic of Armenia, the Administrative Procedure Code of the Republic of Armenia, the Civil Procedure Code of the Republic of Armenia, and sector-specific legislation, as well as the decisions of the Constitutional Court and the Court of Cassation of the Republic of Armenia. In addition, the experience of several European states regarding judicial review within the framework of administrative justice over non-state entities exercising public functions is analyzed.

Results. The study demonstrates that the exercise of public authority powers should be assessed not on the basis of the organizational and legal form of the entity concerned, but rather on the nature of the function performed. It is substantiated that the exercise of delegated public powers by state non-commercial organizations, self-regulatory organizations, and other legal entities established by law may give rise to public-law relations, and that disputes arising from such relations should be adjudicated within the framework of administrative proceedings. The research also reveals that differing approaches adopted by administrative and civil courts in assessing identical legal relationships lead to the transfer of cases between jurisdictions, procedural delays, and risks to the effective realization of the right to judicial protection.

Conclusions. The author concludes that the current legal framework and judicial practice do not fully ensure the effectiveness and accessibility of judicial protection. The study proposes the implementation of the "Single Door to Justice" principle, whereby individuals would access the judicial system through a unified point of entry, while the allocation of cases according to judicial specialization would take place within the judicial system itself. Such an approach would reduce

disputes concerning jurisdiction, eliminate the risk of choosing the wrong court, and contribute to enhancing the accessibility, promptness, and effectiveness of justice.

Key words: public law, private law, administrative justice, subject-matter jurisdiction, delegation of public authority powers, effective judicial protection, transfer of cases, Single Door to Justice principle.

Գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն.
2. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք.
3. ՀՀ վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենք.
4. ՀՀ ՍԴՈ-630, 2006 թ..
5. ՀՀ ՍԴՈ-787, 2009 թ..
6. ՀՀ ՍԴՈ-1026, 2012 թ..
7. ՀՀ ՍԴՈ-1190, 2015 թ..
8. ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշում, ՎԴ/1621/05/14.
9. ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշում, ՎԴ/0477/05/15.
10. ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշում, ԵԴ/38635/02/19.
11. Kudła v. Poland, Application No. 30210/96, Grand Chamber, 26 October 2000..
12. Maurer H. Allgemeines Verwaltungsrecht..
13. Schmidt-Aßmann E. Verwaltungsrecht..
14. Craig P. Administrative Law..
15. Schwarze J. European Administrative Law.
16. «Access to Justice: The Worldwide Movement to Make Rights Effective» - Mauro Cappelletti.
17. «Effective Judicial Protection: Enforcement, Judicial Federalism and the Politics of EU Law» - Giulia Gentile.